Armenian (Eastern) Bible

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԹՈՒՂԹԸ ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻՆ

1 Պողոս, Հիսուս Քրիստոսի ծառա՝
կանչված առաքյալ լինելու,
առանձնացված Աստծո ավետարանի
համար,
2. որ Նա նախապես խոստացել էր
Իր մարգարեների միջոցով՝ Սուրբ
գրքերում,
3. Իր Որդու՝ մեր Տեր Հիսուս Քրիս-
տոսի վերաբերյալ, որ մարմնի կողմից
Դավթի սերնդից եղավ,
4. և Աստծո Որդի հայտարարվեց զո-
րությամբ՝ ըստ սրբության Հոգու, մե-
ռելներից հարություն առնելով.
5. որով շնորհ և առաքելություն
ստացանք՝ Իր անվան համար հավա-
տի հնազանդություն *քարոզելու* բոլոր
ազգերի մեջ,
6. որոնց մեջ դուք նույնպես Հիսուս
Քրիստոսի կանչվածներն եք.
7. ձեզ՝ բոլորիդ, որ Հռոմում եք, Աստ-
ծո սիրելիներիդ, սուրբ լինելու կանչ-
վածներիդ, շնո՞րհ և խաղաղությո՛ւն
մեր Հայր Աստծուց ու Տեր Հիսուս Քրիս-
տոսից:

Պողոսի Աղոթքն Ու Ցանկությունը

8. Նախ ձեզ բոլորիդ համար գոհա-
նում եմ իմ Աստծուց Հիսուս Քրիստոսի
միջոցով, որովհետև ձեր հավատի մա-
սին պատմվում է ամբողջ աշխարհում:
9. Վկա է ինձ Աստված, որին ծառա-
յում եմ իմ հոգով՝ Նրա Որդու ավետա-
րանում, թե ինչպես անդադար ձեզ
հիշատակում եմ իմ աղոթքներում,
10. աղաչելով, որ հիմա, վերջապես,
Աստծո կամքով ինձ հաջողվի ձեզ մոտ
գալ,
11. որովհետև շատ եմ ցանկանում
ձեզ տեսնել, որպեսզի կարողանամ մի
հոգևոր շնորհի փոխանցել ձեզ՝ ձեր ամ-
րապնդման համար,
12. այսինքն՝ ձեզ հետ մխիթարվեմ,
իմ և ձեր ընդհանուր հավատի միջոցով:
13. Արդ, չեմ ուզում, որ անտեղյակ
լինեք, եղբայրնե՛ր, թե շատ անգամ եմ
մտադրվել ձեզ մոտ գալ (սակայն
մինչև հիմա արգելվեցի), որ ձեր մեջ էլ
պտուղ ունենամ, ինչպես ուրիշ հեթա-
նոսների մեջ:
14. Ես պարտական եմ և՛ հույներին,
և՛ բարբարոսներին, և՛ իմաստուններ-
ին, և՛ անմիտներին:
15. Այնպես որ, որքան ի վիճակի եմ,
ես պատրաստ եմ ավետարանը քարո-
զելու ձեզ էլ, որ Հռոմում եք:
16. Որովհետև ես Քրիստոսի ավե-
տարանն ամոթ չեմ համարում, քանի
որ այն Աստծո զորությունն է՝ ամեն
հավատացողի փրկության համար,
նախ հրեայի, և նույնպես հույնի.
17. որովհետև դրանով Աստծո արդ-
արությունը, որ հավատից է, հավատի
համար է հայտնվում, ինչպես գրված է.
«Արդարը հավատով պիտի ապրի»:

Մարդկության Մեղքը

18. Քանզի Աստծո բարկությունը
երկնքից հայտնվել է մարդկանց ամ-
բողջ անաստվածության և անիրավու-
թյան վրա, որոնք ճշմարտությունն
անիրավությամբ են արգելափակում,
19. որովհետև այն, ինչ հնարավոր է
իմանալ Աստծո մասին, հայտնի է
իրենց, քանի որ Աստված ցույց տվեց
նրանց:
20. Նրա աներևույթ *հատկություններ-
ը, այսինքն՝* Նրա մշտնջենավոր զո-
րությունն ու Աստվածությունը, աշ-
խարհի արարչագործությունից սկսած
պարզ երևում են, հասկացվելով այն
բաներից, որ ստեղծված են, այնպես
որ նրանք արդարացում չունեն.
21. որովհետև Աստծուն ճանաչելով՝
Նրան որպես Աստծու չփառավորե-
ցին, ո՛չ էլ շնորհակալ եղան, այլ իրենց
դատողությունների մեջ ունայնացան,
և նրանց անմիտ սրտերը խավարեցին:
22. Իրենք իրենց իմաստուն համա-
րելով՝ հիմարացան:
23. Եվ անեղծ Աստծո փառքը փոխե-

2 Տիտ 1:12
Հռ 15:21-22 14
1Կոր 1:18 16
5 Գործք 9:15
Ամբ 2:4, 17
Եբր 10:38
Եփ 5:5-6 19
9 1Թես 3:9
10 Հռ 15:32
Եփ 4:17 21
1Կոր 1:20 22
Եր 2:11 23

This sample page is for style and size guidance only and cannot accurately represent the quality of the actual printed text. Your printout of this page may show text lighter or heavier than in our actual Bibles depending on the printer used.

If printed actual size this bar should measure 10cm/100mm

If printed actual size this bar should measure 4"

The above image and setting is the property of the Trinitarian Bible Society.
This sample is reproduced for your personal use only—not for distribution.